Հայաստանում Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման ազգային պահանջները

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Երևան

14.03.2017

Քննարկման ենթակա խնդիրները

- Ծրագրի մեկնարկ
- Ծրագրի իրականացում
- Ծրագրի աուդիտ եւ հաշվետվությունների ներկայացում

PAO
PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի մեկնարկ

- Համակարգող մարմիններ՝

  - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն - ԵՄ աջակցության ծրագրերի ազգային համակարգող
  - ԵՄ պատվիրակություն - տրամադրում է համապատասխան նամակ՝ փաստելով, որ տվյալ ծրագիրը գտնվում է ԵՄ ֆինանսավորման շրջանակներում
- ԵՄ ծրագրերը չունեն իրավական կարգավիճակ Հայաստանում
- Բոլոր գործընկերներին խորհուրդ է տրվում գրավոր ծանուցում ներկայացնել ՀՀ-ում ԵՄ պատվիրակություն

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի մեկնարկ - Բանկային հաշվի բացում (1)

- Հասարակական կազմակերպություններ, շահույթ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություններ
  - Տարբեր բանկերում բանկային հաշվի բացման և սպասարկման վճարները տարբերվում են: Անհրաժեշտ է ուսումնասիրել շուկան՝ նախքան բանկային հաշիվ բացելը
  - Եվրո արտարժույթով բանկային հաշվի բացում
  - Գործընկերներին եվրո արտարժույթով միջազգային փոխանցումներ կատարել
- Պետական մարմիններ և պետական մարմիններին համարժեք մարմիններ
  - Պետական մարմինները (այդ թվում `համայնքները) պետք է բացեն արտաբյուջետային հաշիվներ պետական գանձարանի համապատասխան ստորաբաժանումներում
  - Պետական մարմիններին համարժեք մարմինները կարող են բացել բանկային հաշիվներ

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի մեկնարկ - Բանկային հաշվի բացում (2)

- Գործնական խորհուրդներ

- Ծրագրի ղեկավարները պետք է բացեն եւ օգտագործել միայն եվրո հաշիվ (քանի որ դրամաշնորհը փոխանցվելու է եվրո փոխարեքով)
- Եթե ծրագրի գործընկեր եք, ապա դուք և ծրագրի ղեկավար մարմինը միասին համաձայնության կգաք, թե որ արժույթով կլինեն դրամաշնորհի փոխանցումները
- Համայնքները կարող են օգտագործել արդդեն իսկ պետական գանձարանի ստորաբաժանումներում բացված հաշիվները: Այս պարագայում, գումարը կփոխանցվի ՀՀ դրամով
- Համայնքները պետք է տեղեկացնեն պետական գանձարանի ստորաբաժանումներին, որ մուտք գործող ֆինանսական միջոցները դրամաշնորհներ են, որպեսզի կարողանան օգտագործել պետական բյուջեի կողմից հաստատված փոխարժեքը:

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում

- Հայաստանի Հանրապետության ներսում և նրա սահմաններից դուրս դրամական փոխանցումներ կատարել և ստանալ
- Տարադրամի փոխանակում
- Հաշվապահական պահանջներ
- Հարկազատում
- Ճամփորդական ծախսերի և օրապահիկի վճարում
- Սարքավորումների, մատակարարման և ծառայությունների գնում
- Գույքային իրավունքների գրանցում

PAO
PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Դրամական միջոցների փոխանցում (1)

- Եվրո արտարժույթով նոր բանկային հաշվի բացում
  - Հայաստանում տարադրամի փոխանցման համար անհրաժեշտ է առավելագույնը 2 օր: Միջազգային փոխանցումներ իրականացնելու համար անհրաժեշտ է 1-ից 5 օր (Կարող եք փոխանցումների տևողության վերաբերյալ տեղեկատվություն ստանալ բանկերից)
  - Միջազգային փոխանցումներ կատարելու համար բանկից պահանջեք Սվիֆթ (SWIFT) կոդը
  - Էլեկտրոնային բանկային համակարգը հասանելի է Հայաստանի բոլոր բանկերում: Դուք կարող եք վճարումներ և փոխանցումներ կատարել առանց բանկ այցելելու
- Խնդրում ենք ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել ստացողի տվյալների վերաբերյալ (Անուն, ազգանուն, հասցե, հաշվի համար, բանկ և այլն)

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Դրամական միջոցների փոխանցում (2)

- Հայաստանից դուրս գտնվող գործընկերներից և գործընկերներին փոխանցումներ
  - Արտարժույթով դրամական միջոցների ստացման և փոխանցման սահմանափակումներ չկան
  - Փոխանցումները կարող են կատարվել նաև եվրո արտարժույթով
  - Էլեկտրոնային փոխանցման համակարգերը հասանելի են բոլոր բանկերում
- Հայաստանում գտնվող գործընկերներից և գործընկերներին փոխանցումներ
  - Հայաստանի տարածքում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ գործընկերների վճարումներն ու գործարքները կարող են կատարվել ինչպես ազգային արժույթով, այնպես էլ եվրո արտարժույթով

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Դրամական միջոցների փոխանցում (2)

Գործնական խորհուրդներ

- Գործընկերության համաձայնագրում նշեք վճարման, ինչպես նաև չօգտագործված կամ անվավեր ֆինանսական միջոցների վերադարձի ընթացակարգերը
- Իմացեք գործարքի չեղարկման ընթացակարգերը
- Պահպանեք գործարքների ստացականները

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Տարադրամի փոխանակում (1)

- Հայաստանի տարածքում բոլոր վճարումները պետք է կատարվեն ՀՀ դրամով
- Պետական մարմինները տեղեկացնում են գանձապետարանին և կիրառում են ՀՀ պետական բյուջեով ամրագրված փոխարժեքը
- Ծրագրի հաշվետվությունները ներկայացնելու համար կիրառեք եվրոպական պաշտոնական փոխարժեքը, որը կարող եք գտնել հետևյալ հղումով.

(http://ec.europa.eu/budget/contracts_grants/info_contracts/inforeuro/inforeuro_en.cfm)

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Տարադրամի փոխանակում (2)

Հիշեցում

- Տարադրամի փոխանակման ժամանակ պատճառված կորուստները համարվում են ոչ իրավական ծախսեր (Not eligible costs), որոնք չեն կարող լինել ի հաշիվ դրամաշնորհի
- Աշխատավարձերը պետք է վճարվեն ՀՀ դրամով
- Հայկական և այլ արժույթների միջև փոխանակումը չունի որևէ սահմանափակում

PAO
PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (1)

- Նոր կանոնակարգը ուժի մեջ է մտել 2015թ.-ի մայիսին (Կառավարության թիվ 1112-N որոշում, ընդունված 2009թ.-ի սեպտեմբերի 23-ին)
- Շրջանակային Համաձայնագրով ամրագրված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների արտոնությունները ներառում են.
  - Ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ) հարկվող շրջանառության ազատում
  - Ներմուծված արտադրանքի մաքսատուրքերից ազատում
  - Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների շահութահարկի վճարներից ազատում (այդ թվում՝ եկամտի վճարման աղբյուրներից)
  - Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների եկամտահարկի վճարներից ազատում (այդ թվում՝ եկամտի վճարման աղբյուրներից)

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (1)

- Որպեսզի իրավասու լինեք օգտվելու հարկազատման արտոնություններից, դուք պետք է պայմանագրեր կնքեք այն կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են Հայաստան ապրանքների ներմուծմամբ, Հայաստանմ ապրանքների մատակարարմամբ և այլատեսակ ծառայությունների իրականացմամբ
- Այս ամենը վերաբերում է միայն ԵՄ կողմից տրամադրվող միջոցներով իրականացվող գործողություններին: Կանոնակարգերը չեն տարածվում համաֆինանսավորման վրա:

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (2)

ԱԱՀ վճարներից ազատում

- ❖ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի գործողություններ.
  - Ծրագիր իրականացնող կազմակերպության կամ այդ կազմակերպության հետ ուղղակի համաձայնագիր կնքած անձանց կողմից ապրանքների ներմուծում,
  - Ապրանքների մատակարարում, աշխատանքի կատարում և ծրագիր իրականացնող կազմակերպության հետ համաձայնագիր կնքած անձանց կողմից ծառայությունների մատուցում,
  - Ապրանքների մատակարարում, աշխատանքի կատարում և ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից ծառայությունների մատուցում

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (2)

- ❖ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում իրականացվող գործողություններ.
  - Համապատասխան ծրագրի շրջանակներում աշխատող օտարերկրացիների կամ նրանց ընտանիքի անդամների կողմից անձնական ունեցվածքի ներմուծում Հայաստան,
  - Մեկ ընտանիքի համար մեկ մարդատար մեքենայի ներմուծում (նախատեսված է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում աշխատող օտարերկրյա քաղաքացիների համար):

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (2)

Շահութահարկի վճարներից ազատում

- ❖ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում.
  - ○ Ոչ ռեզիդենտ կազմակերպությունները ազատված են շահութահարկի վճարներից,
  - ○ Ռեզիդենտների կողմից ստացված եկամուտները ներառված են համախառն եկամտի և շահութահարկի մեջ: Պարտավորությունները սահմանված են համաձայն «Շահութահարկի մասին» օրենքի:

PAO
PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (2)

Եկամտային հարկի վճարներից ազատում

- ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում.
  - Ոչ ռեզիդենտները ազատված են եկամտային հարկի վճարներից,
  - Հայաստանի ռեզիդենտների կողմից ձեռք բերված եկամուտների համար եկամտային հարկին առնչվող պարտավորությունները պետք է սահմանվեն ՀՀ կողմից հաստատված «Եկամտային հարկի մասին» օրենքի ընդհանուր կարգի համաձայն:

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (3)

Մաքսային տուրքերի վճարներից ազատում

- ❖ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջոցներով.
  - ○ Ծրագիր իրականացնող կազմակերպության կամ այդ կազմակերպության հետ ուղղակի համաձայնագիր կնքած անձանց կողմից ապրանքների ներմուծում,
- ❖ ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում.
  - ○ Հայաստանում աշխատող օտարերկրացիների կամ նրանց ընտանիքի անդամների կողմից անձնական ունեցվածքի ներմուծում Հայաստան,
  - ○ Մեկ ընտանիքի համար մեկ մարդատար մեքենայի ներմուծում:

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (4)

Ընթացակարգերը

- Եկամտային հարկի և շահութահարկի արտոնություններից օգտվելու համար օտարերկրացիները պետք է փաստաթղթեր ներկայացնեն ՀՀ ֆինանսների նախարարություն,
- Այլ արտոնությունների համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան հավաստագրեր,
- Հավաստագիրը կարող եք ներբեռնել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության վեբ-կայքից (http://mineconomy.am/uploades/texekanq-%D5%AC%D5%AB%D6%81.pdf),
- Հավաստագիրը կարող է ներկայացվել ինչպես ձեռագիր, այնպես էլ մեքենագիր:

PAO
PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Խորհրդատվության համար կարող եք դիմել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն (լիցենզավորման եւ թույլտվությունների գործակալություն), Հեռ. (+374 11) 59-71-54)

Ծրագրի իրականացում. Հարկազատում (5)

Ընթացակարգերը (շարունակություն)

- ԵՄ պատվիրակության կողմից ձեռք բերված հաստատման նամակը, ինչպես նաև պայմանագրի պատճենը (բյուջեի հետ միասին) ներկայացնել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն (այն կուղարկվի ՀՀ ֆինանսների նախարարություն)
- Երբ ապրանքների մատակարարումը, աշխատանքի իրականացումը և ծառայությունների մատակարարումը իրականանում է Հայաստանում.
  - Լրացրեք հավաստագրի 2 օրինակները, ստորագրեք և 1 օրինակը տրամադրեք մատակարարին,
  - Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ին ներկայացրեք այդ եռամսակին մատակարարված բոլոր հավաստագրերի պատճենները ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն,

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (5)

- 15 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը ստուգում է ապրանքների գոյությունը, բյուջեով և պայմանագրով նախատեսված աշխատանքները կամ ծառայությունները, և հաստատում է: Անհամապատասխանության դեպքում նախարարությունը վերադարձնում է փաստաթուղթը՝ պահանջելով վերանայել հավաստագիրը 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացնում հաստատված հավաստագրերը:

PAO
PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (6)

Ընթացակարգերը (շարունակություն)

- Երբ ապրանքների ներմուծումը իրականանում է ծրագիր իրականացնող կազմակերպության հետ ուղղակի համաձայնագիր կնքած անձանց կողմից, վերջինս պետք է ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.
  - Լրացված եւ ստորագրված վկայական,
  - Կազմակերպության և այդ անձի միջև կնքված պայմանագրի պատճենը,
  - Կազմակերպության անվան, նկարագրության, ապրանքների քանակի և արժեքի վերաբերյալ մաքսային հայտարարագրի պատճենը,
  - Տեղակայման հաշիվների պատճենը, որտեղ նշված կազմակերպության հետ անմիջական պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձը հանդիսանում է ապրանքների ստացողը:

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Հարկազատում (7)

Ընթացակարգերը (շարունակություն)

- Երբ ապրանքների ներմուծումը իրականանում է ծրագիր իրականացնող կազմակերպության կողմից, վերջինս պետք է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրի հետևյալ փաստաաթղթերը.
  - Լրացված եւ ստորագրված վկայական,
  - Ապրանքների մատուցման վերաբերյալ կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը,
  - Կազմակերպության անվան, նկարագրության, ապրանքների քանակի և արժեքի վերաբերյալ մաքսային հայտարարագրի պատճենը,
  - Տեղակայման հաշիվների պատճենը, որտեղ կազմակերպությունը հանդիսանում է որպես ապրանքներ ստացող սուբյեկտ:
  - Ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման վճարահաշվարկային փաստաթղթերի պատճենը:

PAO
PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Ճանապարհորդական ծախսեր և օրապահիկ (3)

Անհրաժեշտ է մտապահել.

ՀՀ կառավարության թիվ 2335-Ն որոշման մեջ նշված օրապահիկները և բնակության ծախսերը ՀԿ-ների կամ պետական կամ համայնքային բյուջեից ֆինանսական օժանդակություն չունեցող կազմակերպությունների համար նվազագույն սակագներն են: Այս կազմակերպությունները կարող են ազատորեն կիրառել ծրագրերի բյուջով հաստատված սակագները:

PROGRAMME ADMINISTRATION OFFICE

Ծրագրի իրականացում. Ճանապարհորդական ծախսեր և օրապահիկ (3)

Այն դեպքերում, երբ ուղևորությունը ֆինանսավորվում է հրավիրող կազմակերպության միջոցների հաշվին, ապա գործատուն չպետք է փոխհատուցի այդ ուղևորության հետ կապված ծախսերը:

Եթե ֆինանսավորումը կատարվում է մասնակիորեն, ապա մնացած մասը պետք է փոխհատուցվի գործատուի կողմից (ՀՀ պետական կամ համայնքային բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների համար պետք է կիրառվեն 2335 որոշման հավելված 2-ում ընդունված սակագները):

PAO
PROGRAMME ADMINISTRATION OFFICE

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ամալյա Հովսեփյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

ԵՄ ծրագրերի կառավարման բաժին (PAO)

Հեռ. (+374 11) 597 179

Էլ-փոստ: ahovsepyan@mineconomy.am

PROGRAMME ADMINISTRATION OFFICE